ՀԱՌԻՃԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԱԽՈՒՄԲԸ
(ճարտարապետական սրբագրումներ)

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՋԱԼԱԼՅԱՆ

Պատմական Հայաստանի Այրարատ նահանգի Շիրակ գավառը հարուստ է տարբեր ժամանակաշրջանների ճարտարապետական հուշարձաններով։ Միջնադարյան դասական հուշարձանների շարքում իր կարևոր տեղն ունի Հառիճի մենաստանը։ Վերջին տարիներին (1980—1985 թթ.) ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչությունը Հառիճավանքում իրականացնում է հուշարձանախմբի ուսումնասիրության և վերականգնման աշխատանքներ։ Այդ աշխատանքների ընթացքում մեզ խիստ հետաքրքրեց առանձին հատվածների նախնական վիճակի վերականգնման հարցը։ Կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հուշարձանախմբի տարբեր հատվածներ, չնայած Հառիճավանքին նվիրված առանձին արժեքավոր հրապարակումներին, տակավին կարիք են զգում որոշ սրբագրումների և ճշգրտումների։

Հառիճավանքը միջնադարյան Հայաստանի մշակութային և հոգևոր նշանավոր կենտրոններից է։ Այն վեր է խոյանում Արագած լեռան հյուսիսային լանջին, երկու ձորակներով գոյացող հրվանդանի վրա։ Այստեղից հարավ դիմացի սարահարթի վրա, տարածվում է բրոնզեդարյան բնակատեղին (մ. թ. ա. III—II հազ.)։ Հնագիտական ուսումնասիրությունները պարզել են, որ այն հարատևել է մինչև մ. թ. X դարը։ Իսկ թե ե՞րբ է գյուղը տարածվել ձորի հակադիր կողմը, հնարավոր չէ ստույգ ասել։ Բնակատեղիի տարածքում դեռևս կանգուն են բերդապարիսպի մնացորդներ՝ չարված մեծածավալ կոպտատաշ որձաքարից, առանց շաղախի։ Ակներևաբար, հենց այս բերդի հետ է կապված գյուղի անվանումը։ Ըստ Հ. Աճառյանի, Հառիճ, կամ Առինջ նշանակում է գյուղ[1]։ Հ. Մանանդյանը գտնում է, որ այդ կարծիքը վիճելի է և, հիմնվելով Մարկվարտի ենթադրության վրա, առավել հավանական է համարում «բերդ» կամ «ամրություն» ստուգաբանությունը, որի օգտին է խոսում նաև այն փաստը, որ համանման հնչողություն ունեցող գրեթե բոլոր բնակավայրերում (Առինջ, Արուճ, Բագառիճ և այլն) պահպանվել են հնագույն բերդապարիսպների հետքեր[2]։

Պատմական աղբյուրներում վանքի մասին վկայությունները սակավ են։ Չեն պահպանվել նաև հիմնադրությանը վերաբերող արձանագրություններ։ Հնագույն հիշատակությանը հանդիպում ենք Մխիթար Անեցու մոտ (XIII դար)։ Խոսելով Զաքարյանների կողմից ազատագրված շրջանների մասին, պատմիչը ի շարս Հովհաննավանքի, Տեղեր, Ուշի մենաստանների և Սաղմոսավանքի հիշատակում է Հառիճավանքը. «և որ աշխարհ որ տիրեաց՝ ելից զայն եկեղեցօք Քրիստոսի աստուծոյ, նաև զերեսն Արագածու՝ զՈհանավանքն, զՅառիճոյ վանքն, զՏեղերոյ վանքն, զՅուշու վանքն, զՍաղմոսավանքն և այլ բազում եկեղեցիս ի գեղորայս»[3]։ Վանքի գոյության մասին տեղեկություն կա նաև Վարդան պատմիչի «Աշխարհացույցում». «Զորագետ Անի է և Շիրակ գավառն, ուր կան սուրբ ուխտքն Հռոմոս և Մարմաշէն և Կամրշաձոր, Դպրավանքն և Հառիճա և այլքն բազումք»[4]։ Կարճառոտ, բայց կարևոր հիշատակություն կա Սիմեոն կաթողիկոսի «Ջամբռի» մեջ, ուր նշված է, որ վանքը հիմնադրվել է 895 թ. Սմբատ Ա-ի թագավորության ժամանակ[5]։ Կասկածից վեր է, որ վանքը հիմնադրվել է ավելի վաղ։ Այդ մասին է վկայում այն, որ Հառիճի հուշարձանախմբի կառույցներից ս. Գրիգոր եկեղեցին իր ճարտարապետական ձևերով VI—VII դարերին բնորոշ կառույց է։ Բացի այդ, գյուղի տարածքում և գերեզմանատանը պահպանվել են վաղ շրշանի բազմաթիվ հուշարձանների հետքեր՝ տապանաքարեր,

---

1 Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, 1971, էջ 268։

2 Հ. Մանանդյան, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, Երևան, 1936, էջ 36։

3 Մխիթար Անեցի, Մատյան աշխարհավեպ հանդիսարանաց, Երևան, 1983, էջ 119։

4 «Աշխարհացույց Վարդան Վարդապետի», Փարիզ, 1960, էջ 15։

5 Սիմեոն կաթողիկոս, Ջամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 287։

որոնցից մեկը թվագրված է ԻԱ (572)[6], հավասարաթև խաչի պատկերով բեկորներ, V—VII դարերին բնորոշ քառակող կոթող[7], դյուզի արևելյան եզրին գտնվող VII—VIII դարի մատուռի ավերակները և այլն։

Վանքի արձանագրություններում ամենավաղ հիշատակությունը վերաբերում է XII դարին։ Ս. Գրիգոր եկեղեցու հարավային պատին կարդում ենք. ԵՍ ԳՐԻԳՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ ՍԲ ՈՒԽՏԻՍ ՀԱՌԻՃԱՅԻ ՇԻՆԵՑԻ ՁՏԵՂԻ ՍՆՆԴԵԱՆ ԻՄՈՅ Ի :Ճ: ԱՄԵԱՅ ԿՈՐԾԱՆՄԱՆԷՆ։ Դերեզմանատանը պահպանվել է նույն Գրիգոր առաջնորդի տապանաքարը, որտեղ վերջինս հիշվում է որպես երկրորդ շինության առաջին առաջնորդ։ Արձանագրությունը թվագրված է ՈԼԴ (1185 թ.) կամ ՈԼԹ (1190 թ.)[8]։ Այստեղից կարելի է եզրակացնել, որ վանքը ավերվել է XI դարում սելջուկյան արշավանքների ժամանակ և, հարյուր տարի մնալով ավերակ վիճակում, նորոգվել է XII դարում Գրիգոր առաջնորդի կողմից։ Իսկ թե ինչպիսին է եղել վանքի վիճակը մինչև XI դարը, մատենագրական և վիմագրական աղբյուրները լռում են։

XII դարում Զաքարե և Իվանե Զաքարյանները, Հայաստանի մի շարք շրջաններ ազատագրելով սելջուկներից, շինարարական լայն թափի գործունեություն են ծավալում։ Բուն զարգացում են ապրում քաղաքաշինությունն ու ճարտարապետությունը։ Ամբողջանում են մի շարք վանքային հուշարձանախմբեր՝ Տաթևը, Հագբատ, Կեչառիսը, Հովհաննավանքը, Մակարավանքը և ուրիշներ։ Զաքարե ամիրսպասալարը, դնելով Հառիճը և շրջակա հողերը, կառուցում է վանքի պարիսպը, ս. Աստվածածին եկեղեցին (1201 թ.), որին հետագայում կցվում է գավիթը։ Կառուցվում են ս. Հարություն եկեղեցին և դրատուն-դպրատունը։ Այս շրջանից պահպանվել են բազմաթիվ արձանագրություններ (մինչև XIV դար՝ 1334 թ.), որից հետո տեղեկությունները Հառիճավանքի մասին դարձյալ բացակայում են։ Հավանական է, որ այն ենթարկվել է մոնղոլական ավերիչ արշավանքներին։ Հետագա տվյալները վերաբերում են արդեն XVIII դարին։ 1789 թ. Ներսես Աշտարակեցին այցելում է Հառիճ։ Նա հաղորդում է, որ վանքը գտնվում է քայքայված և աղքատ վիճակում, մահմեդական տիրապետության տակ[9]։ 1795 թ. Աղա Մահմադ խանը արշավում է Հայաստան։ Նրա զորավարներից մեկը՝ Ջալալբալան, ավերում է վանքի պարիսպները և ս. Հարություն եկեղեցին[10]։

Կիսավեր, խարխլված էր Հառիճի վանքը, երբ 1850 թ. կազմվում է Հառիճի վանական ընկերությունը, որը և ձեռնամուխ է լինում համալիրի նորոգությանը, կառուցում է կից շինությունները (սեղանատուն, վեհարան, ննջարան, ժառանգավորաց դպրոց, հացատուն և բուժարան)։ Հառիճավանքը կազմում են երկու եկեղեցի՝ ս. Գրիգոր և ս. Աստվածածին, գավիթը, դրատուն-դպրատունը և երկու մատուռ։ Հուշարձանախումբը նախկինում շրջապատող պարսպից պահպանվել է մի փոքր հատված։ Այս տարածքից հյուսիս-արևելք փռված է գյուղի հին գերեզմանատունը, ուր գտնվում են ս. Հարություն եկեղեցու ավերակները (գծ. 1, 2)։

Ս. Գրիգոր եկեղեցի։ Համալիրի հնագույն կառույցն է։ Կենտրոնագմբեթ, խաչաթև եկեղեցի է, որ դասվում է Մաստարայի տիպի հուշարձանների շարքը։ Վաղ միջնադարից պահպանվել են այս տիպի չորս կառույց՝ Մաստարան, Արթիկը, Հառիճը և Ոսկեպարը։ Այս հուշարձանների մանրազնին ուսումնասիրությունը կարող է պարզել Մաստարայի տիպի առաջացման ու զարգացման օրինաչափությունները։

Ս. Գրիգոր եկեղեցու կառուցման ժամանակի մասին ոչ մի տվյալ չի պահպանվել, ուստի անհնար է ստույգ թվագրել հուշարձանը։ Արել Մխիթարյանցը եկեղեցին համարում է X դարի

---

6 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, 1948, էջ 203—205։

7 Ա. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակը IV—VII դդ., Երևան, 1949, էջ 171 (կոթողը գտնվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում)։

8 Հ. Եղիազարյանը սխալմամբ կարդում է ՈՒՄԲ (1773 թ.), որտեղից էլ եզրակացնում է, որ առաջնորդները տարբեր մարդիկ են [տե՛ս Հ. Եղիազարյան, Հառիճավանքը և նրա վիմագրությունը («Էջմիածին», 1958, № 8—9, էջ 81)]։ Ե. Տեր-Մինասյանն առավել հավանական է համարում ՈԼԹ (1190 թ.) [տե՛ս Ե. Տեր-Մինասյան, Հառիճա վանքի արձանագրությունների առթիվ («Էջմիածին», 1958, Ա, էջ 43)]։

9 «Հառիճայի վանական ընկերության հիշատակարանն ու հաշիվը», Ալեքսանդրապոլ, 1909, էջ 12։

10 Արել վարդապետ Մխիթարեանց, Պատմութիւն մենաստանին Հառիճոյ, Թիֆլիս, 1856, էջ 32—33։

կառույց[11]։ Նա կրկնահարկ մատուռին վերաբերող Սարգիս Ճոնի անթվական շինարարական արձանագրությունը սխալմամբ վերագրում է ս. Գրիգոր եկեղեցուն՝ Սարգիս Ճոնին համարելով X դարի անձնավորություն։ Նույն կարծիքին է նաև Ս. Ջալալյանցը[12], Ղ. Ալիշանը, հիմնվելով Ա. Մխիթարյանցի տվյալների վրա, կրկնում է վերշինիս տեսակետը, թեև կասկածի տակ է առնում արձանագրության թվագրման ճշտությունը[13]։ Հետագա հետազոտողները, նկատի առնելով հուշարձանի հատակագծային լուծումը, այն համարում են VII դարի կառույց[14]։



Նկ. 1. Հառիճավանք. համալիրի հատակագիծը։

Հուշարձանն իր բացարձակ չափերով Մաստարայի տիպի կառույցներից ամենափոքրն է և հիմնականում կրկնում է այդ տիպի եկեղեցիների հատակագծային լուծումը։ Աբսիդները արտաքինից հնգանիստ են, ներսից կիսաշրջանաձև։ Գլխավոր մուտքը արևմտյան կողմից է։ Երկրորդ մուտքը՝ հարավից, սակայն ոչ թե աբսիդից, ինչպես Արթիկում, այլ անկյունային պատից։ Մեր կարծիքով, մուտքի այսօրինակ տեղադրությունը թելադրված է հարավային աբսիդի ան-

11 Ա. Մխիթարեանց, նշվ. աշխ., էջ 13—18։

12 Ս. Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Տփխիս, 1842, էջ 211։

13 Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 158։

14 Թ. Թորամանյան, նշվ. աշխ., էջ 246, Ս. Մնացականյան, Զվարթնոցը և նույնատիպ հուշարձանները, Երևան, 1971, էջ 54, Հ. Եղիազարյան, Շիրակի լեռնահովտի պատմական հուշարձանները, Երևան, 1975, էջ 13, О. Халпахчян, Архитектурные ансамбли Армении, М., 1980, с. 266; В. Арутюнян, С. Сафаряи, Памятники армянского зодчества, М., 1951, с. 62.

միջապես ժայռի եզրին կառուցված լինելու հանգամանքով։ Երրորդ մուտքը, որ բացվել է հետագայում անկյունային պատի վրա հյուսիսից, տանում է ս. Աստվածածին եկեղեցու դավիթ։ Հ. Եղիազարյանը գտնում է, որ այն բացվել է դավթի կառուցման կապակցությամբ[15]։ Սակայն, ինչպես հիշատակում է Ա. Մխիթարյանցը, այն իրականացվել է միայն XIX դարում[16]։

Եկեղեցին հարավ-արևմտյան կողմից ունի քառանկյուն հատակագծով մի ավանդատուն։ Ի տարբերություն Արթիկի ու Մաստարայի, որտեղ արևելյան կողմի զույգ ավանդատները օրգա-



Նկ. 2. Հառիճավանք. համալիրի ընդհանուր տեսքը (վերակազմություն)։

նապես ձուլվում են եկեղեցիների ծավալներին, Հառիճում այն իր չափերով չի ներդաշնակում եկեղեցու արտաքին հորինվածքին, և որոշ չափով խաթարում է կառուցվածքի միասնականությունը։ Սրա պատճառը ս. Գրիգոր եկեղեցու փոքր բացարձակ չափերն են Մաստարայի և Արթիկի հետ համեմատած, որտեղ հիմնական կառուցվածքների և ավանդատների ծավալների հարաբերությունը այնպիսին է, որ վերջիններս չեն խանգարում գլխավոր ծավալների ընկալմանը։ Արտաքին ծավալների այս անհամամասնությունն է, հավանաբար, որ որոշ հետազոտողների մոտ առաջացրել է այն կարծիքը, թե ավանդատունը կցվել է եկեղեցու կառուցումից հետո[17], մինչդեռ տեղում ակնհայտ է եկեղեցու և ավանդատան միաժամանակ կառուցված լինելու փաստը։ Դա պարզորոշ երևում է կառույցի պատերի շարվածքից և ներսից ու դրսից ավանդատան մուտքի բարավորի տեղադրությունից։

Ս. Գրիգոր եկեղեցուն հետագայում (հավանաբար, վանքի վերանորոգման ժամանակ՝ XII դարում) հարավ-արևմուտքից կցվել է մի այլ ավանդատուն, որի վրա Սարգիս Ճոնը բարձրացրել է երկրորդ հարկի մատուռը։ Հուշարձանի ինտերյերը պահպանվել է իր նախնական տեսքով։ Այս տիպի մյուս կառույցների նման ս. Գրիգոր եկեղեցու ներքին տարածությունը ևս միասնական է լուծված։ Այստեղ գմբեթն օրգանապես կապվում է աբսիդների ու անկյունային մասերի հետ։ Ի տարբերություն ինտերյերի, եկեղեցու արտաքինը կրել է բազմաթիվ փոփոխություններ։ Նորոգվել է արտաքին երեսապատը, ավելացվել է կրկնահարկ մատուռը, որը XIX դարում արևմուտքից կցվել է զանգակատանը[18], և, վերջապես, ամբողջովին վերակառուցվել է եկեղեցու գմբեթը։ Այժմ դժվար է պատկերացնել կառույցի նախնական տեսքը, քանի որ այն բոլոր կողմերից շրջապատված է կից կառույցներով, իսկ հյուսիսից մտնում է ս. Աստվածածին եկեղեցու դավթի ծավալի մեջ։

Մեծ փոփոխություն է կրել ս. Գրիգոր եկեղեցին XIX դարի նորոգման ժամանակ։ Իրենց նախնական նիշից բարձրացվել են անկյունային մասերը. այդ մասին է վկայում հյուսիսային

---

15 Հ. Եղիազարյան, նշվ. աշխ., էջ 19։

16 Ա. Մխիթարեանց, նշվ. աշխ., էջ 77—78։ Մուտքը բացել է Պողոս վարդապետ Ջալալթյանը արևմտյան դուռը փակելու պատճառով, 1840-ական թվականներին։

17 Հ. Եղիազարյան, նշվ. աշխ., էջ 19, О. Халпахчян, նշվ. աշխ., էջ 266։

18 Կառուցվել է 1892 թ. Հառիճի վանական ընկերության նախագահ Հովսեփ Կոստանյանցի հիշատակին։

կողմում, ս. Աստվածածին եկեղեցու գավթի պատի մեջ պահպանված զամբյուղաձև զարդաքանդակով քիվը։ Այս հատվածների և արսիդների սիզբնական նիշից բարձրացված ծածկերը փակում են գմբեթի օղակաձև հիմքը, որի վրա բարձրացել է 16-նիստավոր թմբուկը։ Վերջինս վերանորոգվել է, ինչը պարզ երևում է երեսապատող քարի գույնից, շարվածքից։ Թմբուկը պսակված է եղել շրջանաձև, զամբյուղաձև զարդաքանդակ ունեցող քիվով, որը գրեթե ամբողջապես պահպանվել է։ Եկեղեցու ծածկերն ու վեղարը իրականացված են եղել կղմինդրով (կղմինդրի մնացորդներ գտնվել են նորոգման աշխատանքների ժամանակ)։ Ս. Մնացականյանը գտնում է, որ նիստավոր թմբուկից շրջանաձև քիվին անցումը արված է կղմինդրի ծածկը հեշտությամբ իրականացնելու։ Նպատակով[19], 1863 թ. նորոգման ժամանակ[20] թմբուկի ծածկը արվել է կիսագնդի ձևով, մի բան, որ բնորոշ չէ հայ ճարտարապետությանը և այժմ թյուր պատկերացում է տալիս հուշարձանի մասին։

Եկեղեցու գավիթը։ Կառույցը չի պահպանվել. այն հիմնովին ավերված է։ Ս. Գրիգոր եկեղեցու արևմտյան ճակատի վրա պահպանվել են այժմ գոյություն չունեցող շինության շաղախի հետքեր, որոնք հնարավորություն են տալիս վերջինիս մասին միայն մոտավոր պատկերացում կազմելու։

Մեր կարծիքով, գավիթը ունեցել է ուղղանկյունաձև հատակագիծ, հարել է ս. Գրիգոր եկեղեցուն արևմուտքից և իր մեջ է առել վերջինիս արևմտյան արսիդը։ Կառույցի հյուսիսային կողմում տեղավորված է եղել առանձնացված մի սենյակ։ Դա պարզորոշ երևում է եկեղեցու պատի վրա ուրվագծվող հետքից։ Պահպանված շաղախի մնացորդները հիմք են տալիս եզրակացնելու, որ գավիթն ունեցել է երկթեք ծածկ։

XIII դարում ս. Գրիգոր եկեղեցու դեռևս կանգուն գավթին հյուսիսից կցվել է ս. Աստվածածին եկեղեցու գավիթը, իր մեջ առնելով վերջինիս հյուսիս-արևելյան անկյունը (ս. Աստվածածին եկեղեցու գավթի արևմտյան ճակատին պահպանվել է ս. Գրիգոր եկեղեցու գավթի հետ կցման հանգույցի ուրվագիծը), իսկ հարավից գրաստուն-դպրատունը։

Ս. Մնացականյանը որպես գավիթների հնագույն տիպեր նշում է Սյունիքում գտնվող X դարի երեք հուշարձան՝ Վահանավանք, Քարկով և Գնդեվանք[21]։ Մեր կարծիքով, Հառիճավանքի ս. Գրիգոր եկեղեցու գավիթը նմանատիպ մի շինություն է եղել (հավանաբար, նաև նույն ժամանակի) ու իր հատակագծային լուծումով ավելի մոտ է Գնդեվանքի գավթին։

Ս. Աստվածածին եկեղեցի։ Հուշարձանախմբի գլխավոր եկեղեցին է։ Այն իր տեղադրությամբ ու ծավալով իշխող դիրք ունի համալիրում։ Կառույցը կրկնում է XI—XII դարերում տարածված արտաքինից ուղղանկյուն, ներքուստ խաչաձև շինությունների այն տիպը, ուր ներքին խաչաձևությունը ստացվում է չորս անկյուններում տեղադրված կրկնահարկ ավանդատների շնորհիվ, այն տարբերությամբ, որ արևմտյան հատվածի երկրորդ հարկի ավանդատները այստեղ փոխարինված են հայկական ճարտարապետության պատմության մեջ եզակի, զույգ սյունազարդ օթյակներով։

Ս. Աստվածածին եկեղեցին աչքի է ընկնում կառուցողական բարձր արվեստով, քարի եզրագների հմուտ օգտագործմամբ, նյութի կատարյալ մշակմամբ։

Եկեղեցու շինարարության մասին պահպանվել է երկու հիշատակություն։ Արևմտյան պատին, բարավորի վերնամասում գրված է.

ՇՆՈՐՀԻՒՆ ԱՅ. ԵՍ ԶԱՔԱՐԷ ԱՄԻՐ ՍՊԱՍԱ-
-ԼԱՐ ՇԻՆԵՑԻ ԶԿԱԹՈՂԻԿԷՍ։

Հյուսիսային ճակատի արձանագրությունը, որտեղ եկեղեցու կտիտորը՝ Զաքարե ամիրսպասալարը, հայտնում է եկեղեցու և ամրոցի կառուցման մասին, գրվել է ՈՍ (1201) թ.։ Սակայն քանի որ ս. Գրիգոր եկեղեցու հարավ-արևմտյան պատին 1196 թ. Գրիգոր Տուտեորդու և Աստվածատուր Արուճեցու արձանագրությունների մեջ հիշատակվում է նաև ս. Աստվածածին եկեղեցին, ապա 1201 թ. պետք է համարել կառույցի շինարարության ավարտի տարին։ Այսպիսով, համալիրի գլխավոր շինության կառուցումը սկսվել է ս. Գրիգոր եկեղեցու նորոգումից անմիջապես հետո՝ XII դարի վերջին տասնամյակում։

---

19 Ս. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 54։

20 «Հառիճայի վանական ընկերության հիշատակարանն ու հաշիվը», էջ 48։

21 С. Мнацаканян, Архитектура армянских притворов, Ереван, 1952, с. 24—25.

Եկեղեցու ներքին տարածությունը ակնառու է իր վերասլաց համամասնություններով և ճարտարապետական զուսպ հարդարանքով, բացառությամբ ավագ խորանի բեմառաջքի մշակման։ Ավելի ուշ ոմրաձև և եռանկյունաձև բուսական զարդապատկերներով այս հորինվածքն առավել բարդ ու կատարյալ ձևով կրկնվել է Գանձասարի եկեղեցում (1238 թ.)[22]։

Վերը հիշատակված օթյակները տեղադրված են արևմտյան զույգ ավանդատների վրա և իրենց եռակամար բացվածքով նայում են դեպի աղոթասրահ։ Այստեղ են տանում տակից շքաքարե մշակում ունեցող 10-ական բարձակային աստիճաններ։ Աղոթասրահի ներքին ամբողջ ծավալի վրա գերիշխում է ս. Աստվածածնի լուսավոր գմբեթը։ Եկեղեցու միակ մուտքը արևմտյան կողմից է ու բացվում է զավթի մեջ։ Արտաքինից պրոֆիլավոր հորիզոնական գոտին, շրջանցելով եռանկյունաձև հատույթի խորշերն ու պատուհանները և կառույցի հիմնական ծավալը երկու մասի բաժանելով, յուրատեսակ պատվանդան է ծառայում երեք ճակատներում (հյուսիսային, արևելյան և հարավային) բարձրացող խաչաձև հորինվածքների համար և միևնույն ժամանակ ավարտում է ստորին մասի զուսպ և առանց պաճուճանքների մակերևույթը։ Վերջինս յուրաքանչյուր ճակատում մասնատվում է միայն եռանկյունաձև հատույթի խորշերով։ Կառույցը պսակվում է քսան նիստ ունեցող թմբուկով։ Վերջինս շլատված է որմնասյուներով և վարդյակների շարքով, ինչը թեթևություն ու վերասլացություն է հաղորդում նրան[23]։

Ս. Աստվածածին եկեղեցու հովհարաձև վեղարով գմբեթը, որը կրկնում է XI դարից Հայաստանում տարածված տիպը (Ամբերդ, Անի, Խծկոնք, Մարմաշեն), մշակման նոր աստիճանի է հասցված քանդակազարդ վարդյակների շնորհիվ, որոնք յուրատեսակ գոտի են ստեղծում գմբեթի շուրջը։ Այս տիպը հետագայում առավել կատարյալ հանդես է գալիս Գանձասարի եկեղեցում։

Իրենց դեկորատիվ մշակմամբ առավել հարուստ են եկեղեցու արևելյան և հյուսիսային ճակատները։ Սրանց հետ համեմատած հարավային ճակատի ավելի զուսպ մշակումը, կարծում ենք, պետք է բացատրել տեսանելիության ավելի փոքր հնարավորություններով, քանի որ վերջինս բարձրացել է անմիջապես ձորի զառիթափ եզրից[24]։ Ուշագրավ է Իվանե և Զաքարե եղբայրների հարթաքանդակով արևելյան ճակատի հորինվածքը[25]։ Կտիտորական ավանդական հորինվածքը ներկայացնում է դեմ առ դեմ կանգնած Զաքարյան եղբայրներին, որոնց իրար մեկնած ձեռքերի վրա ժամանակին տեղավորված է եղել եկեղեցու մանրակերտը։ Այդ մասին Ս. Ջալալյանցը գրում է. «...արյանք քաջազոր սպասալարացն Զաքարէի և Իվանէի ունենալով ի ձեռին զփոքրիկ եկեղեցի»[26]։ Վերջինս այժմ չի պահպանվել։ Մանրակերտի տեղում 1895 թ. տեղադրվել է աստվածամոր մի մարմարե պատկեր[27]։ Հետաքրքրական է նույն ճակատի վերին ձախակողմյան մասում հուշկապարիկի՝ թևավոր առյուծի մարմնով կնոջ ֆիգուրը։ Նույնատիպ քանդակները տարածված են այդ դարաշրջանի մի շարք կառույցներում (Հովհաննավանք, Մակարավանք, Նոր Վարդավանք և այլն)։ Ուշագրավ է նմանատիպ ֆիգուրի առկայությունը Հառիճավանքում 1219 թ. Հովհաննես գրչի ձեռքով գրված ձեռագրում, որի մասին հիշատակում է Գարեգին Հովսեփյանը[28]։ Ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան ճակատի վրա տեղադրված է կառույցի մանրակերտը, որը Ս. Մնացականյանը նախնական է համարում[29]։ Մոդելի մեր ու-

---

22 А. Л. Якобсон, История армянского средневекового зодчества, М.—Л., 1960, с. 147; Բ. Ալիսարյան, Գանձասար, Երևան, 1981, էջ 29—30։

23 Ս. Աստվածածին եկեղեցու հովհարաձև վեղարը 1856 թ. փոխարինվել է կոնաձևի, որի հետևանքով այժմ խախտվել են եկեղեցու համամասնությունները և այն ներկայանում է խաթարված տեսքով։

24 Եկեղեցու հարավային ճակատի դիմաց այժմ գոյություն ունեցող հարթությունը առաջացել է 1873 թ., երբ ձորի կողմից Հառիճի վանական ընկերությունը կառուցել է հենապատ։ Միջանկյալ տարածության մեջ լիցք է արվել։

25 Ս. Մնացականյան, Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը, Երևան, 1976, էջ 104, 105։

26 Ս. Ջալալեանց, նշվ. աշխ., էջ 212։

27 Պատկերը տեղադրել է Հառիճի վանական ընկերությունը։ Քարը բերվել է Թավրիզից, քանդակագործն է ալեքսանդրապոլցի վարպետ Ճանիկ Գրիգորյանը։

26 Գարեգին արք. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք Հայոց պատմության մեջ, մասն I, Վաղարշապատ, 1928, էջ 66—68։

29 Ս. Մնացականյան, Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը, էջ 105։

սումնասիրությունը ցույց է տալիս, որ այն, հավանաբար, տեղադրվել է XIX դարում, ծածկերի վերանորոգման ժամանակ, քանի որ բոլոր մանրամասներով մշակված մոդելի արևելյան ճակատի կոմպոզիցիայում կտիտորների միշև պատկերված է Աստվածամայրը և ոչ թե եկեղեցու մոդելը։ Բացի այդ, այստեղ վեղարը կոնաձև է, ոչ թե հովհարաձև։ Մոդելը, փաստորեն, պատկերում է կառույցի վիճակը XIX դարում։ Մանրակերտը թերևս տեղադրվել է վնասված նախնական մոդելի փոխարեն։

XIX դարում Հառիճի վանական ընկերությունը կատարել է բազմաթիվ ու բազմապիսի նորոգման աշխատանքներ։ Նորոգվել են սալահատակն ու ծածկասալերը, ամրացվել է արևելյան ճակատը, որի հետևանքով փակվել են զույգ ավանդատների պատուհանները։ Հյուսիսային ներքին պատին և ավագ խորանի պատի մեջ դրվել են մկրտության քարե ավազաններ[30]։

Ե. Աստվածածին եկեղեցու ճարտարապետական հորինվածքում առանձնահատուկ ուշադրության են արժանի զույգ սյունազարդ օթյակները, որոնց առկայությամբ են պայմանավորված կառույցի ներքին և արտաքին ծավալների մշակումները, դրանց փոխադարձ կապը։ Ուշագրավ է, որ ստորին խուլ և արտաքին պարզ մասը եզրափակող գոտին գտնվում է նույն մակարդակի վրա, ինչպես որ ներքին եռակամար բացվածքով օթյակները։ Սրանցից ցած աղոթասրահը իրականացված է նույնպես խուլ պատերով։ Նույնիսկ լուսավորությունը այդ մասում կատարվում է օթյակների բարձրության վրա գտնվող լուսամուտներից։ Այսպիսով, աղոթասրահի մակարդակի վրա ներսից և արտաքինից ստեղծված է ճարտարապետական զուսպ և խիստ միշավայր։

Արտաքին բաժանող գոտուց վեր են բարձրանում խաչաձև հորինվածքները, որոնք հյուսվում են լուսամուտների շուրջը և դրանք առնում իրենց մեջ։ Կտրված լինելով հողից, և, հետևաբար, նաև աղոթասրահի հատակից, այս հորինվածքները, փաստորեն, ծայր են առնում օթյակների նիշից։ Եկեղեցու արտաքին դեկորատիվ հորինվածքում ամենից բարձր տեղադրված է կտիտորական քանդակը։ Ինչպես տեսանք, ս. Աստվածածին եկեղեցու վերին մասը, որն սկսվում է լուսավոր, հանդիսավոր սյունազարդ օթյակների մակարդակից, իր հարուստ և ճոխ մշակմամբ հակադրվում է ստորին մասին և՛ արտաքինից, և՛ ներսից։ Այս ամենը ցույց է տալիս այն խիստ ֆունկցիոնալ բաժանումը, որը գոյություն է ունեցել աղոթասրահի և օթյակների միջև, դրանցից օգտվողների սոցիալական տարբերությունը։ Այսօրինակ լուծումը առաջինը չէ հայկական միջնադարյան ճարտարապետության մեջ։ Դեռևս X դարում Աղթամարի տաճարում հանդիպում ենք նմանօրինակ մոտեցման[31]։ Գագիկ Արծրունու պալատական այս եկեղեցում առկա է արքայական օթյակը՝ տեղավորված հարավային աբսիդի մեջ։ Մանուել ճարտարապետի հրաշալի կառույցի արտաքին դեկորատիվ հարուստ հարդարանքը, ինչպես և Հառիճում, սկսվում է արքայական օթյակի մակարդակից, որից ներքև գտնվող արտաքին ծավալները նույնպես պարզ են ու անպաճույճ։ Հառիճի նման, այստեղ էլ ստորին արտաքին ծավալը ավարտվում է ամբողջ պարագծով պտտվող դեկորատիվ գոտիով, որը օթյակի հետ գտնվում է միևնույն մակարդակի վրա։ Լուսավորությունը ամբողջ պարագծով նույնպես իրականացվում է օթյակի բարձրությունից։ Երկու եկեղեցիների ֆունկցիոնալ լուծումների միակ տարբերությունն այն է, որ Աղթամարում օթյակի մուտքը արտաքինից է, Հառիճում՝ աղոթասրահից։ Երկու հուշարձանն էլ աչքի են ընկնում արտաքին ծավալների կատարյալ և եզակի մշակմամբ, հանդիսավոր և ճոխ հարդարանքով։ Բնական է, որ յուրաքանչյուր եկեղեցի մշակված է իր ժամանակի շնչով ու ճաշակով։

Ինչպես հայտնի է, գրավոր աղբյուրներում Զաքարյանների իշխանությունը անվանվում է «թագավորություն», իսկ Զաքարեն և Իվանեն հիշվում են «թագավոր, արքա» տիտղոսներով[32]։ Քանի որ Հառիճի ս. Աստվածածինը միակ եկեղեցին է, որ մոտ երկու հարյուր տարի հետո կրկնում է Աղթամարի ֆունկցիոնալ և դեկորատիվ սկզբունքները, կարծում ենք, որ ինչպես Աղթամարի Գագիկ Արծրունի արքայի օթյակը, այնպես էլ Հառիճի զույգ օթյակները կատարել են նույն դերը, ծառայելով Զաքարե և Իվանե «արքաներին»։ Նշենք նաև, որ Հառիճի այս կառույցին անմիջապես հաջորդած նույնատիպ եկեղեցիներում (Հովհաննավանք, Գանձասար) օթյակների տեղում հանդես են գալիս ավանդական փակ ավանդատներ։

Եկեղեցու զավիթը։ Գավիթը ստույգ թվագրելն անհնար է, քանի որ Վահրամ Հեթում իշխանի շինարարական արձանագրության տարեթիվը եղծված է. այն պետք է կառուցված լինի

---

30 «Հառիճայի վանական ընկերության հիշատակարանն ու հաշիվը», էջ 5—158։

31 Ս. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն, Վարպետաց-վարպետներ, Երևան, 1982, էջ 40։

32 «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, Երևան, 1976, էջ 543։

մինչև 1224 թ., որովհետև Տեր-Հովհաննեսը, որը հիշատակված է արձանագրության մեջ, վանքի առաջնորդ է եղել մինչև այդ տարեթիվը։ Ս. Աստվածածին եկեղեցու գավիթը արևմուտքից հարում է համալիրի գլխավոր կառույցին և իր մեջ է առնում ս. Գրիգոր եկեղեցու հյուսիսային արսիդը. այն պատկանում է չորս սյուներով գավիթների տիպին, որը տարածված է եղել XIII դարում։ Կենտրոնում տեղադրված սյուները կամարներով կապվում են 8 որմնասյուների հետ։ Առաստաղում առաջացած երեք անկյունային քառակուսի և չորս միջանկյալ ուղղանկյունաձև հատվածները ծածկված են թաղերով (հարավ-արևմտյան քառակուսի անկյունային հատվածում, որտեղ ս. Գրիգոր եկեղեցու արսիդը մտնում է գավթի մեջ, բնականաբար, թաղը բացակայում է)։

Իր ճոխությամբ առաստաղի դեկորատիվ մշակումը եզակի է։ Առաստաղի յուրաքանչյուր հատված լուծված է յուրովի։ Վերջերս՝ գավթի ծածկերի նորոգման ժամանակ, պարզվեց, որ հյուսիսային կենտրոնական ուղղանկյունաձև հատվածի կենտրոնում գոյություն է ունեցել թաղի մեջ բացված 10 սմ տրամագծով կլոր անցք, որը փակված էր քարե խցանով և մինչ այդ ներսից չէր նշմարվում։ Մեր կարծիքով, անցքը նախատեսված է եղել շահերի ամրացման համար։ Նույնանման անցքեր, հավանաբար, գոյություն ունեն նաև մյուս երեք կենտրոնական հատվածներում։ Առաստաղի կենտրոնական հատվածում չորս սյուները միացնող կամարների վրա բարձրանում է երդիկը, որը լուծված է շթաքարե ծածկով և կրկնում է XIII դարում տարածված տիպը։ Ս. Գրիգոր եկեղեցու արսիդի և գավթի արևմտյան պատի միջև գոյություն ունեցող խորշի նպատակն է կապ ստեղծել ժամանակին գոյություն ունեցած ս. Գրիգոր և ս. Աստվածածին եկեղեցիների գավիթների միջև։ Նկատելի է, որ երկու գավիթները մեկտեղելու հատվածում եղել է անցում, որը հին գավթի քանդվելուց հետո լցվել է։ Գավթին հարավից կցված է կրկնահարկ ավանդատուն, որն արտաքինից դուրս է գալիս կառույցի ընդհանուր ծավալից։

Ս. Աստվածածին եկեղեցու գավթի հատակը մինչ այժմ բարձրացված է եղել իր նախկին մակարդակից։ Նորոգումից (1984 թ.) հետո այն իջեցվել է իր սկզբնական նիշին, նախկինից մոտ 40 սմ ներքև։ Հարավային պատի մոտ բացվել է մի տապանաքար, որը հերքում է մինչ այժմ գոյություն ունեցող այն կարծիքը, թե Հառիճավանքի գավթում թաղումներ չեն կատարվել[33]։

Արտաքինից գավթի ճակատները լուծված են պարզ, առանց դեկորատիվ հարդարանքի։ Պատերը բարձրանում են եռաստիճան որմնախարսխի վրա։ Երեսապատն իրականացված է մանուշակագույն տուֆով։ Ուշագրավ է հյուսիս-արևմտյան անկյան լուծումը։ Կառույցի ուղիղ անկյունը հատված է և ավարտվում է շթաքարե մշակմամբ։ Այսօրինակ լուծման նպատակն էր արևելյան դարպասից գավթին մոտեցող այցելուին ուղղել դեպի համալիրի գլխավոր մուտքը։ Նմանատիպ լուծման ենք հանդիպում Հաղարծնի վանքում, որտեղ սեղանատան հարավ-արևելյան անկյան մշակումն ունի նույն նշանակությունը։ Արևմտյան ճակատի վրա խախտված է լուսամուտների դասավորության համաչափությունը, որի պատճառը ս. Գրիգոր եկեղեցու արսիդի առկայությունն է գավթի հարավ-արևմտյան հատվածում։

Քանի որ ներսում կենտրոնական սյուների և վերջիններից որմնասյուների միջև գցված կամարների բարձրությունները հավասար են, գավթի ծածկը արտաքինից հարթ է։ Կառույցը պսակվում է ուղիղ քիվով և երեք կողմից միաթեք ծածկով[34]։ Քիվերի մեջ, յուրաքանչյուր ճակատում պահպանվել են երկուական ջրհորդաններ, որոնք վկայում են, թե գավթի ծածկը ժամանակին ունեցել է այլ լուծում։ Հավանաբար, այն հողածածկ է եղել։ Շինությունն ավարտվում է ութանիստ երդիկով։

Հետաքրքիր է լուծված գավթի շքամուտքը։ Այն պատկանում է ուղղանկյունաձև մուտքերի տիպին[35]։ Մուտքը եզերում են երկու կողմից հյուսկեն զույգ կիսասյուներ։ Նույնատիպ մշակում ունեն XI դարում կառուցված Պեմզաշեն գյուղի Մակարավանքի ս. Սիոն եկեղեցու կիսասյուները։ Տիմպանը իրականացված է երկգույն տուֆի տարրերով, որի կեսից ավելին չի պահպանվել։ Գոյություն ունեցող չորս տարրերից հնարավոր եղավ վերականգնել տիմպանի սկզբնական տեսքը (գծ. 5)։ Աստվածաձև տարրերով նույնատիպ հորինվածքի հանդիպում ենք նաև Հովհաննավանքի բեմառաջի, Սաղմոսավանքի տիմպանի, Բարձրաքաշի գավթի, Անիի Հյուրատան շքամուտքի ձևավորման մեջ։ Սաղմոսավանքում, փաստորեն, կրկնված է արդեն մշակված հորին-

---

33 Հ. Եղիազարյան, նշվ. աշխ., էջ 22, О. Халпахчян, նշվ. աշխ., էջ 266։

34 С. Мнацаканян, Архитектура армянских притворов, с. 134.

35 Նույն տեղում, էջ 87։

վածքը ոչ թե առանձին տարրերով, այլ ամբողջական քարով։ Հովհաննավանքում և Բարձրաքաշում նման տարրերից հավաքված են հարթ մակերևույթներ։ Իրենց հորինվածքով առավել մոտ են Անիի և Հառիճի տիմպանների մշակումները։ Այս բոլորի մեջ Հառիճի կոմպոզիցիան առանձնանում է իր կատարելությամբ և հստակությամբ։ Ի տարբերություն Անիի, ուր խախտված է համաչափությունը, այստեղ հորինվածքը սիմետրիկ է և կատարյալ ձևով է տեղադրված տիմպանի բացվածքի մեջ։

Կառույցն ունի հետաքրքիր գունային լուծում։ Արտաքինից ընդհանուր մանուշակագույն ծավալի վրա գունային շքեղ մշակմամբ ընդգծված է շքամուտքը։ Կարմիրի և սևի համադրությամբ ստեղծված տիմպանը միակ ակտիվ մակերեսն է արևմտյան ճակատի վրա։ Նույն սև և կարմրերանգ քարերի օգտագործումով է լուծված նաև կառույցի ինտերյերը։ Արևմտյան կենտրոնական սյուները կարմիր են, իսկ խոյակները և խարիսխները՝ սև, արևելյանը՝ հակառակը։ Հնարավոր է, որ ժամանակի ընթացքում վնասված առաստաղը նույնպես ունեցել է գունային լուծում, քանի որ, ինչպես նշում է Ա. Մխիթարյանցը, ըստ ավանդության այն մշակված է եղել գունավոր սալիկներով[36]։

Ս. Աստվածածին եկեղեցու գավիթում պահպանվել է որմնանկարի մի փոքր հատված (ս. Աստվածածին եկեղեցու մուտքի վերնամասում)։ Այստեղ պարզորոշ երևում է միայն ՈՁ (1230-ական թվականներ), ինչը վկայում է, որ այն իրականացվել է կառույցի ավարտից անմիջապես հետո։ Կարելի է պատկերացնել կառույցի ներքնամասը իր նախնական ճոխությամբ՝ սյուների գունային լուծումները, հարուստ մշակված առաստաղը, որը պահել է շահերը՝ լուսավորելով ամբողջ ինտերյերը և որմնանկարները։ Այսպիսով, գավիթը լուծված է արտաքին զուսպ և անպաճույճ, ներքին ճոխ մշակված ինտերյերի համադրությամբ։

Ս. Հարությունն եկեղեցի։ Ս. Հարություն եկեղեցին, «զորոյ զգ վայելուչ կերտուածս տեսանողք՝ յարտասվուս ցնդեին»[37], 1795 թ. հիմնահատակ ավերվում է։ Հետագայում Հառիճավանքի շինությունները, բացառությամբ ս. Հարություն եկեղեցու, բազմիցս նորոգվել են։ «Եվ կոփածոյ քարինք նորա փոխադրեալ յայլ շինուածոցն պետս։ Միայն դերբուկք կարկառ մնացեալ քարակիր որմանցն»[38]։[1]

Ս. Հարություն եկեղեցուն վերաբերող տեղեկությունները սակավ են։ Արել Մխիթարյանցը[39] և Ղ. Ալիշանը[40] եկեղեցին նշում են առանց թվագրման։ Հ. Խալփախչյանը[41] և Հ. Եղիազարյանը[42] ս. Հարություն եկեղեցին համարում են V դարի կառույց։ Թ. Թորամանյանը, նկարագրելով Հառիճի գերեզմանատան տապանաքարերն ու խաչքարերը, եկեղեցին չի հիշատակում. ակներևաբար, այն ծածկված է եղել հողի շերտով։

Հուշարձանների պահպանման և օգտագործման գլխավոր վարչության ձեռնարկած մաքրման աշխատանքների ժամանակ (1982 թ.) բացվել են եկեղեցու պատերն ու գետնախարիսխները, հայտնաբերվել են ճարտարապետական մանրամասներ։ Ս. Հարություն եկեղեցին ներկայացնում է Հայաստանում լայնորեն տարածված գմբեթավոր սրահի տիպը։ Հուշարձանը գրեթե ամբողջ պարագծով պահպանվել է գետնախարսխից 0,7 մ միջին բարձրությամբ։ Վերջինս կազմված է 0,4 մ բարձրությամբ երկու աստիճանից, տեղադրված անմիջապես տուֆի բնական զանգվածի, ժայռի վրա։ Եկեղեցին ունի արևելքից արևմուտք ձգված ուղղանկյուն հատակագիծ։

Արտաքինից հարավային և հյուսիսային պատերի վրա պահպանվել են եռանկյունաձև խորշերի հետքեր, որոնք բացակայում են արևելյան և արևմտյան ճակատներում։ Կառույցի միակ մուտքը արևմտյան կողմից է։ Ներսից ուղղանկյունաձև դահլիճը (արևելյան կողմից) ավարտվում է ավագ խորանով, որի երկու կողմերում տեղադրված են ավանդատները։ Երկայնական պատերին կից պահպանվել են բարդ պրոֆիլավոր հատույթի որմնախարիսխներ (գծ. 3)։

Հայտնաբերված բեկորները հնարավորություն են տալիս պատկերացնելու եկեղեցու նախնական տեսքը։ Որմնախարիսխների վրա բարձրացել են կիսաշրջանաձև հատույթով որմնասյուներ՝ պսակված բարդ պրոֆիլավոր որմնախոյակներով։ Մյուս երկու որմնասյուները գտնվել

---

36 Ա. Մ խ ի թ ա ր ե ա ն ց, նշվ. աշխ., էջ 72։
37 Ա ր ե լ Մ խ ի թ ա ր ե ա ն ց, նշվ. աշխ., էջ 32։
38 Նույն տեղում, էջ 38։
39 Նույն տեղում, էջ 32, 38։
40 Ղ. Ա լ ի շ ա ն, նշվ. աշխ., էջ 162—163։
41 Օ. Հ ա լ պ ա խ չ յ ա ն, նշվ. աշխ., էջ 265։
42 Հ. Ե ղ ի ա զ ա ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 23։

են ավագ խորանի երկու կողմում։ Վերջիններիս կիսաշրջանաձև հետքերը տեսանելի են պահպանված ուղղանկյունաձև հատույթով զույգ որմնախարիսխների վրա։ Զորս որմնասյուների միջև գցված են եղել զմբեթակիր կամարները՝ կազմելով զմբեթակիր քառակուսին։ Օկեղեցին պըսակված է եղել կլոր թմբուկով։ Կառույցն իրականացվել է դարչնագույն և մանուշակագույն երանգների տուֆով, կրաշաղախով։ Ի զեպ, քարի մշակումն ու գույնի ընտրությունը նույնն են,





Նկ. 3. ս. Հարություն եկեղեցու հատակագիծը։

ինչ որ Հառիճավանքի գլխավոր կառույցում՝ ս. Աստվածածին եկեղեցում։ Ս. Հարություն եկեղեցին իր բացարձակ չափերով շուրջ երկու անգամ փոքր է ս. Աստվածածնից։ Պատերի շարքերի բարձրությունը ս. Հարություն եկեղեցում 60 սմ է, ս. Աստվածածնում՝ 70 սմ։ Պահպանված ճարտարապետական մանրամասները՝ պսակները, քիվերը, եռանկյունաձև խորշերի պսակները գրեթե նույնությամբ կրկնում են ս. Աստվածածին եկեղեցում առկա ձևերը։ Ս. Հարություն եկեղեցու բեկորների վրա, սկսած որմնախարսխի աստիճաններից, պահպանվել են վարպետի նշաններ։ Դրանք երկուսն են՝ ԽԱ և Խ։ Խ նշանը ճիշտ նույն գծագրությամբ պահպանվել է նաև ս. Աստվածածին եկեղեցու արևելյան և հյուսիսային ճակատների բազմաթիվ բեկորների վրա։

Այսպիսով, երկու եկեղեցիների շինարարական նյութից և գույնի ընտրությունից, մշակման ձևից, ճարտարապետական մանրամասների կրկնությունից կարելի է եզրակացնել, որ ս. Աստվածածին և ս. Հարություն եկեղեցիները կառուցվել են միևնույն վարպետների և ճարտարապետների կողմից։ Ընդ որում, ս. Հարություն եկեղեցու շինարարությունը սկսվել է ս. Աստվածածնի կառուցումից անմիջապես հետո, XIII դարի սկզբին։ Այդ է հաստատում նաև եկեղեցու մի արձանագրություն, որի բեկորների մի մասն է պահպանվել (դծ. 4)։ Վերջինս փորագրված է եղել ս. Հարություն եկեղեցու հարավային ճակատին, եռանկյունաձև խորշերի պսակների մակարդակով։ Դա երևում է արձանագրության սկսվածքի բեկորից, որը եկեղեցու հարավ-արևմտյան անկյան քարն է, և եռանկյունաձև խորշի պսակի բեկորից, որի վրա շարունակվում է բնագիրը։ Արձանագրությունը թվագրված է ՈԿԵ (1216 թ.)։ Հավանաբար, այն կրել է նվիրատվական բնույթ և գրվել է ս. Աստվածածին եկեղեցու՝ Զաքարե ամիրսպասալարի, արձանագրությունից 15 տարի հետո։ Այսպիսով, 1216 թ. ս. Հարություն եկեղեցին կանգուն է եղել։

Որոշ մասնագետների կողմից այս հուշարձանի վաղ թվագրումը, հավանաբար, պայմանավորված է եղել եկեղեցու շրջակայքում գտնվող V—VI դարերի տապանաքարերի, նաև կառույցի հյուսիսային պատի վրա հետագայում տեղադրված վաղ միջնադարյան շինության մի խոշոր





Նկ. 4. ս. Հարությունն եկեղեցու հարավային ճակատի արձանագրությունը։

բարավորի առկայությամբ, որի վրա այդ շրջանին բնորոշ հավասարաթև խաչ է փորագրված։

Հառիճից ոչ հեռու դեռևս կանգուն են Պեմզաշեն գյուղի Մակարավանքի ս. Սիոն (XI դար), Առաքելոց (XI դար), Սառնաղբյուրի ս. Կարապետ (1205 թ.) եկեղեցիները, որոնք պատկանում են գմբեթավոր սրահի տիպին և ունեն միևնույն հատակագծային և ծավալատարածական լուծումները, ինչ ս. Հարություն եկեղեցին։ Սակայն վերջինս առանձնանում է իր ձևերի կատարելությամբ, կառուցողական բարձր մակարդակով, ինչը ակնհայտ երևում է նույնիսկ հուշարձանի ավերակներից։

Կրկնանարկ մատուռ։ Կառուցվել է ս. Գրիգոր եկեղեցուն հարավ-արևմուտքից կից ավանդատան վրա։ Ուղղանկյունաձև հատակագծով պարզ կառույց է։ Մուտքը բացված է ավանդատան





Նկ. 5. ա) Հառիճ. գավթի տիմպանի վերակազմություն
բ) Անի. հյուրատան շքամուտքի տիմպան (վերակազմությունը Թ. Թորամանյանի)։

թաղի մեջ։ Մատուռ են բարձրացել փայտե աստիճանի միջոցով։ Կառուցել է Սարգիս Ճոնը, որի շինարարական անթվական արձանագրությունը պահպանվել է մատուռի արևմտյան ճակատին։

Այստեղ հիշատակված է Հայր Համաղասպի անունը, որը հանդիպում է նաև ս. Աստվածածին եկեղեցու դավթի՝ Վահրամ Հեճուպի արձանագրության մեջ։ Հետևաբար, մատուռը կառուցվել է գավթի հետ, միևնույն ժամանակահատվածում, XIII դարի 20—30-ական թվականներին։ XIX դարի նորոգության ժամանակ փոխվել են կառույցի ծածկերը, վերաշինվել է քանդված հարավային պատը։

Պարիսպը։ Կառուցել է Զաքարե ամիրսպասալարը, ինչպես նշված է ս. Աստվածածին եկեղեցու արձանագրության մեջ։ Այն արևելքից և հյուսիսից շրջափակել է վանքի տարածքը, որը արևմուտքից և հարավից պաշտպանվում է բարձր, անմատչելի ժայռերով։ Այժմ պահպանվել է պարսպի արևելյան կամարակապ մուտքով մի փոքր հատվածը։ Դարասկզբի արխիվային լուսանկարներում պարզորոշ երևում են կիսագլանաձև աշտարակի մնացորդներ, որոնք ներկայումս չկան։ Պարսպապատի հյուսիսային հատվածը, հավանաբար, ձգվել է ներկայիս կից շինությունների ուղղությամբ, որոնք ժամանակին կառուցվել են ավերված պարսպի պարագծով։

Դպրատուն։ Տեղադրված է ս. Գրիգոր եկեղեցուց հարավ-արևմուտք։ Գտնվում է ավերված վիճակում։ Պահպանվել է միայն հյուսիսային պատը (զույգ որմնասյուներով), արևմտյան պատի մի փոքր հատված որմնասյան հետ և մեկ կենտրոնական սյուն, կապված երկու ուղղությամբ որմնասյուների հետ։ Կառույցի հյուսիսային պատի արտաքին երեսապատի բացակայությունից հետևում է, որ այն կցված է եղել ս. Գրիգոր եկեղեցու գավթին։ Ինչպես և ս. Աստվածածին եկեղեցու գավիթը, գրատուն-դպրատունը պատկանում է չորս կենտրոնական սյուներով գավիթների տիպին, այն տարբերությամբ, որ այստեղ կենտրոնական սյուներից մինչև որմնասյուներ ձգված կամարները ավելի ցածր են, քան կենտրոնական կամարները, որի հետևանքով կառույցի յուրաքանչյուր ճակատում գոյացել են ճակատոններ, երկթեք ծածկերով։ Գրատուն-դպրատան մուտքը եղել է արևմուտքից, առանցքից շեղված դեպի ձախ։ Կարծում ենք, կառույցն իր արտաքին տեսքով հիշեցրել է Սանահնի գրատան հորինվածքը։

Պահպանված ճարտարապետական տարրերը մի փոքր ավելի պարզեցված ձևով կրկնում են ս. Աստվածածին եկեղեցու գավթի լուծումները։ Հավանաբար, դպրատունը կառուցվել է գավթից հետո, XIII դարում։ Առ այսօր անորոշ է ուսումնասիրվող կառույցի նշանակությունը։ Աղբյուրներում այն հիշատակվում է առավելապես որպես փոքր գավիթ, գրատուն։ Հ. Շահխաթունյանցը գտնում է, որ այն առաջնորդարան է կամ ուսումնարան[43]։ Քանի որ Հառիճը հայտնի է որպես միջնադարի նշանավոր կրթօջախ և գրչության կենտրոն (այստեղ ուսանել են Ստեփանոս Քոթենավորը և Հովհան Օձնեցին), հավանական է, որ կառույցը ծառայած լինի ուսումնական նպատակների համար։ Այս հետևության օգտին է խոսում նաև կառույցի ներսից հյուսիս-արևելյան անկյունում փորված տարածությունը, որը, թերևս, օգտագործվել է որպես գրապահոց։

Ճգեավորի մատուռ։ Գտնվում է վանքից հարավ-արևմուտք՝ միայնակ կանգնած ժայռի վրա։ Կառույցի անմատչելիությունը դժվարություններ է ստեղծում ուսումնասիրությունների համար։ Այն ունի ուղղանկյուն հատակագիծ։ Միակ մուտքը հյուսիսից է։ Հարավային ճակատի վրա բացվում է մի փոքր լուսամուտ։ Ներսում, արևելյան պատի դիմաց, կանգնեցված է ուղղանկյունաձև մի քարաբեկոր, որը և Հ. Շահխաթունյանցին և Ղ. Ալիշանին ակներևաբար առիթ է տվել ենթադրելու, որ մատուռի մեջ է գտնվում վանքի ճարտարապետի գերեզմանը[44]։

XIX դարում Հառիճավանքի վանական ընկերությունը կառուցում է մի շարք քաղաքացիական շինություններ, որոնք ավարտում են համալիրի հորինվածքը։

Այսպիսով, իր գոյության ընթացքում ընդարձակվելով ու համալրվելով նոր կառույցներով, Հառիճավանքը ամբողջական տեսք է ստացել գերազանցապես Զաքարյանների շինարարական գործունեության շրջանում։ Հուշարձանախմբի կառույցներն իրենց ճարտարապետական ու կոնստրուկտիվ, սոցիալական բնույթի, ֆունկցիոնալ ու դեկորատիվ լուծումներով թույլ են տալիս Հառիճավանքը դասելու Հայաստանի ճարտարապետական լավագույն համալիրների շարքը։

---

43 Հ. Շահխաթունեանց, Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գավառացն Արարատայ, հ. 2, Էջմիածին, 1842, էջ 269։

44 Հ. Շահխաթունեանց, նշվ. աշխ., էջ 267, Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 160, 164։

АНСАМБЛЬ АРИЧСКОГО МОНАСТЫРЯ
(архитектурные уточнения)

АЛЕКСАНДР ДЖАЛАЛЯН

Резюме

Известный очаг средневековой армянской культуры и словесности—Аричский монастырь, основанный еще в раннем средневековье (церковь св. Григора), окончательно сформировался во время строительной деятельности Захаридов (XII—XIII вв.). В этот период были возведены церковь св. Аствацацин, уникальная среди памятников армянской архитектуры своими лоджиями в интерьере, принадлежавшая ктиторам—Захаре и Иване Долгоруким, гавит, училище, крепостные стены. К этому времени относится и церковь св. Арутюна, время постройки которой было установлено во время раскопок 1984 г.

Аричский монастырь отличается своеобразным архитектурным стилем, декоративными и функциональными решениями социального характера.